գամ օուրս (s!)։ և ի մէջ ուստ նոցայ հանգիցէ ամ. յանուժեէն ալ երկիր նոցայ լցցի. ի ժամանակաց երկնից և ի ցաւղոյ. և յանընդոց (s!) աղբիւրացն նոցայ բարիք ի ներքուստ ի ժմկի արդենցն և արեգական փոփոխմանց. ի գումարեից առ...» (Հավել. Բ. 25)։ Այստեղ ընդհատվում է հատակտորը թերթ ընկած լինելու պատճառով։*

Մենք դիտմամբ մեջ բերինք այս յերկար վկայությունները, վորպեսզի ընթերցողներին բնական աղբյուրների խոսքերով գաղափար տանք Պռոշյանց տոհմի դեպի Գլաձորի դպրոցը ցույց տված հովանավորությունն ու գլաձորցիների յերախտագիտական վերաբերմունքը դեպի իրենց պարոնները։

Այստեղ հիշատակված յեղբայրներից համեմատաբար ավելի մանրամասնություններ գիտենք Ամիր-Հա-

թվին, գիտենք, վոր մի Վասակ՝ Շահապունյաց ձորի իշխանն եր և հիշատակարանն ել թվագրված է նրա անունով. «ի յիշխանութե նահանգիս մերոյ թոռին Պռոշա զոր ի յազգէն Վարդանանց Վասակա»։ «Թոռն Պռոշա» արտահայտությունը պետք է հասկանալ ընդհանուր՝ այսինքն Պռոշի սերունդի մաքով. հայտնի չէ, վոր Պռոշը Վասակ անունով թոռ չի ունեցել. նրա միակ թոռը Եաչին եր, վորի զավակներն են վերոհիշյալ չորս յեղբայրները։ Այս Վասակը չի կարող նաև Ամիր-Հասան Բ.-ի վորդին լինել, վորովհետև 1332 թվին վերջինս այնքան յերիտասարդ եր, վոր իշխանության վորևե գավառի կառավարիչ վորդի ունենալ կարող չեր։ Եաչին, գիտենք, ծնվել է ԺԳ. դարու յոթանասնական թվականների սկզբին և ամուսնացել է դարավերջի տասնամյակին. 1317 թվին յերբ մեռավ նա, Ամիր-Հասան Բ.-ը կարող եր միայն անչափահաս պատանի լինել և իրոք, մենք տեսանք, վոր № 734 Զ-ի պատառիկի մեջ «մանկագոյն իշխանն մեր» է կոչված, յեթե ընդունելու լինինք նույն իսկ, վոր այդ պատառիկը ծագում է նորա իշխանության առաջին տարիներից։ Մենք կտեսնենք նաև՝ վոր ՉՀ=1321 թվին շինված Սպիտակավոր Աստվածածնի պատի վերա գտնվում է Ամիր-Հասան Բ.-ի քանդակված պատկերը բոլորովին յերիտասարդական հասակում։ Ապա, ուրեմն, Կուքվա վանքի հիշատակարանի Վասակը վոչ այլ վոք է, բայց յեթե Եաչոյի վորդիների շարքում հիշված Վասակը կամ Սաաքել Հաղբատեցու «քաջ և արի հոլովն Վասակ»։*



Ցուցան գրչի հիշատակարան. *Հավել. Բ. 26.* **Պատկեր 90—91.**

սանի մասին, վոր իբրև ավագ՝ տոհմի իշխանապետն եր հոր մահվանից հետո, և նշանավոր հանդիսացավ քիչ հետո հիշվելիք Սպիտակավոր Աստվածածնի շինությամբ, բայց վերևի վկայություններից զատ տեղեկություններ ունինք և մյուս յեղբայրների մասին։ Կուքվայ վանքում գրված մի հիշատակարանից, 1332

* *Մատենադարանում աշխատելիս այս հատվածի վերա մեր ուշադրությունը դարձրեց հ. Ներսես Ակինյան։ Փակագծի մեջ առնվածները մենք ենք լրացնում. բազմակետերով նշանակված մասերը ցեցակեր։*

*Ամիր-Հասանի և Ջումայի հիշատակությունն ունինք Գլաձորի դպրոցի Հունան գրչի կողմից եւ 1334 թվին. «ի յիշխանութե և տէրութե համօրէն գաւառացս մեծ իշխանին Բուրթէլի և որդոց նորին Պէշգենի և Իւանէի, եւ ի տեղւոյս տէրութե թոռանց մեծին Պռոշա Ամիր-Հասանա և Ջումայի»**։ Այստեղ*

* *Ալիշան. Սիսական. 487։*

** *Յակոբ Թօփճեան. Ցուց. Ձեռ. Դաղյան Խաչիկ վարդապետի. Բ. 30. (Պատկ. 90—91. Հավել. Բ. 26)։*